ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

23.11.2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 14-ը:
Նիստին մասնակցում էր ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում / Զեկ. Գ. Ավետիսյան /:
2. 2019-2020 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/ :
3. Ընթացիկ հարցեր
   3.1 «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկում:/ Զեկ. Մ. Միքայելյան/

1. Լսեցին.- 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին:/ Զեկ. Գ. Ավետիսյան/

Գ. Ավետիսայնը ներկայացրեց առաջին ընթացիկ քննություններն և ստուգումները իրականացվել են մասնաճյուղում գործող ժամանակացույցին համապատասխան: Արդյունավետ կազմակերպման առումով ցանկալի էր, որ նույն կուրսը մեկ օրում մի քանի քննական պրոցես չունենա, սակայն օբեկտիվ պատճառներով հնարավոր չէր և 4 կուրսի մոտ համընկնումներ եղել են: Հիմնական պատճառներն են ընթացիկ քննությունների և ստուգումների թվի գերազանցումը

նախատեսված օրերից և նույն կուրսում նույն դասախոսի կողմից մի քանի առարկայի դասավանդումը:

Ֆակուլտետում քննությունները և ստուգումները իրականացրել են դասավանդող դասախոսները, բացառությամբ 3-ի, որոնք կազմակերպվել է համապատասխան ամբիոնների կողմից:

Գ. Ավետիսյանը նշեց նաև I կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և ստուգումներին մասնակցել են 108 ուսանող. «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» ԿԾ՝ 65 ուսանող, «Զբոսաշրջություն», «Սերվիս» ԿԾ՝ 43:

Ընթացիկ քննությունների միջին ցուցանիշը 2019-2020 ուստարում 2,90 է (4,01՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), իսկ նախորդ ուսումնական տարում 2,70(3,95), ընթացիկ ստուգումների միջին ցուցանիշը 6,83 է (8,89՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), նախորդ ուսումնական տարում՝ 6,20 (8,15): Արդյունքները քննարկվել է ուսանողների հետ, գրավոր բողոք չի եղել: Եղել են քննությունների հետ կապված մասնակի խնդիրներ, որոնք քննարկվել են ամբիոնների կողմից:

Գ. Ավետիսյանը ամփոփեց նշելով, որ ԿԾ ղեկավարների և ուսումնական խորհրդատուների հետևողական աշխատանքների շնորհիվ խնդիրները արագ վեր են հանվում և լուծումներ ստանում:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Սարիբեկյանը, Լ. Մադաթյան

Մ. Միքայելյանը ներկայացրեց «Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի ամփոփ տվյալներ: Նա նշեց, որ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողները «Ֆինանսներ-2» դասընթացից արձանագրել է ամենացածր միավորները, իսկ «Ֆինանսներ» մասնագիտությամբ՝ «Միկրոտնտեսագիտություն» դասընթացից: Նա նշեց, որ սա պայմանավորված է ուսանողների թերացումների, ինչպես նաև դասընթացների բարդության հետ: Մ. Միքայելյանը նշեց, որ ամբիոնի ամփոփման արդյունքում միջին միավորը գրանցվել է 2,95 միավոր, որը համարվում է բավարարար: Նա հորդորեց ԿԾ-ի պատասխանատուին ավելի հետևողական լինել, որպեսզի ուսանողների հետ կատարված աշխատանքները առավել արդյունավետ լինել:

Կրթական ծրագրի ղեկավար Ա. Սարիբեկյանը նշեց, որ «Ֆինանսներ-2» առարկայի առաջադրանքները կազմված էին դասընթացի փաթեթին համապատասխան: Նա նշեց, որ ուսանողների կողմից արձանագրված ցածր միավորները իրենց ոչ պատշաճ պատրաստվելու արդյունք է:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց «Զբոսաշրջություն» և «Սերվիս» մասնագիտություններով ուսանողների առաջադիմությունը, ըստ որի «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ ուսանողների միջին միավորը կազմել է 3,14, իսկ «Սերվիս»՝ 3,04: Գ. Հովհաննիսյանը հավելեց, որ անհրաժեշտ է հետաքրքրվել ուսանողների կարիքների մասին, ինչպես նաև արձանագրեց, որ հետևողական աշխատանքի արդյունքում կունենանք ավելի լավ արդյունք, քան ունենք ներկայումս: Գ. Հովհաննիսյանը առաջարկեց ուսումնասիրել, հասկանալ յուրաքանչյուր դասընթացի առանձնահատկությունները միջանկյալ քննությունների անհրաժեշտությունը, սեմինար կամ գործնական աշխատանքների բավարար քանակը, դասընթացի վերջնարդյունքների դասավանդման և գնահատման կապը:

Լ. Մադաթյանը փաստեց, որ բոլոր դասընթացներն էլ դասավանդվել են պատշաճ մակարդակով և ուսանողները ջանասեր աշխատելու դեպքում կապահովեն ավելի լավ արդյունքներ:

Արտահայտվեց.- Ա. Մակարյանը

Նա նշեց, որ դասընթացի գնահատման մեթոդը պետք է միտված լինի ստուգելու վերջնարդյունքների ձևավորմանը, որն էլ անհրաժեշտ է իրականացնել ամբողջ կիսմայակի ընթացքում: Կիսամյակի ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե ուսանողները արդյոք ձեռք են բերում վերջարդյունքներով սահմանված հմտություններն ու կարողությունները, այլ ոչ թե արձանագրել արդյունքները կիսմայակի վերջում: Ա. Մակարյանը առաջարկեց քննարկել կիրառվող գնահատման մեխանիզմների արդյունավետությունը:

Որոշեցին – 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին – 2019-2020 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատման մասին:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ 2018 -2019 ուս. տարում ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների

նախագծերը ուսանողներին է տրամադրվել սեպտեմբերին: Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոններում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են ինչպես առկա, այնպես հեռակա ուսուցմամբ ավարտական աշխատանքի թեմաները՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում հաստատվել է ավարտական աշխատանքների ցանկերը ըստ ղեկավարների և ուսանողների ու ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը/նախագծերը կցվում են/:

Արտահայտվեցին - Ա. Մակարյանը, Տ. Թամրազյանը, Ա. Պոտոսյանը:

Ա. Մակարյանը դրական գնահատեց ամբիոնների աշխատանքը: Նա հանձնարարեց ամբիոնների վարիչներին, որ ավարտական աշխատանքները անգլերեն լեզվով ունենան ամփոփում կես էջի սահմաններում:

Տ. Թամրազյանը, Ա. Պոտոսյանը նշեցին, որ ավարտական աշխատանքների բաշխվածությունը իրականացվում է ճիշտ ընթացակարգով և ըստ ուսանողների ընտրության: Նրանք հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին – հաստատել «Տնտեսագիտություն», «Սերվիս» /առկա, հեռակա/ մասնագիտությունների 2019- 2020 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

Որոշեցին- Ֆակուլտետի «Տնտեսագիտություն», «Սերվիս» մասնագիտությունների 2019- 2020 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքները ունենան անգլերեն լեզվով ամփոփում կես էջի սահմաններում:

3.Ընթացիկ հարցեր.

3.1. Լսեցին.- «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի առաջարկի հայտի քննարկման մասին:

Մ. Միքայելյանը համառոտ ներկայացրեց «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի առաջարկի հայտի կառուցվածքը:

Նա նշեց, որ հայտը կազմված է 15 բաժիններից և համառոտ ներկայացրեց դրանք:

Մ. Միքայելյանը հիմնավորումներ ներկայցրեց մագիստրոսական ծրագրի ներդրման վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ տնտեսության զարգացման նոր իրավիճակներում կարևորվում է բիզնեսի տարբեր ոլորտների/ ներառյալ ֆինանսական/ համար մասնագետների պատրաստումը և դրանում պետական կարգավորման և կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների դերը: Ծրագիրը հրապուրիչ կլինի ոչ միայն ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի, այլ նաև մյուս ֆակուլտետների և հարակից մարզերի բուհերի շրջանավարտների համար:

Ծրագրի առաքելությունը՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տնտեսական քաղաքականություն, զարգացման ծրագիրեր ու հայեցակարգեր մշակող, ինչպես նաև ձեռնարկությունների զարգացման ծրագրեր մշակող, վերլուծող և իրականացնող մասնագետների պատրաստումն է: Ծրագրի մրցակցակային առավելություններից նա նշեց ուսումնական պլանի ճկունությունը, որը թույլ կտա ուսումը շարունակել արտերկրում, բարձր որակավորում, հետազոտական, վերլուծական և փորձագիտական մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը: Ինչպես նաև ուսումնական պլանի և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական բազային և տեղեկատվական ու կրթական միջավայրի ապահովվածությունը, նաև համեմատաբար ցածր ուսման վարձը / ԵՊՀ-ի համեմատ/:

Մ. Միքայելյանը ներկայացրեց հայտի բոլոր բաժինները և առաջարկեց հավանություն տալ:

Որոշում.- Հավանություն տալ «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի առաջարկի հայտին և ներկայացնել ՄԿՈՍ բաժին:

Գիտխորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա.Ալեքսանյան***